ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

13 **փետրվարի** 2018 **թվական**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3/1
ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 3-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 1-ԻՆ ՆԻՍՏԻ

Նիստին մասնակցում էր Երևանի ավագանու 62 անդամ:

Նիստը վարում էր Երևանի քաղաքապետ Տ. Մարգարյանը:

Երևանի ավագանու նիստին հրավիրված էին՝ Երևանի քաղաքապետի տեղակալները, քաղաքապետի գլխավոր խորհրդականը, քաղաքապետի խորհրդականները, Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետը, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը, աշխատակազմի քարտուղարի տեղակալը, աշխատակազմի անշարժ գույքի կառավարման, իրավաբանական, կազմակերպական, տրանսպորտի, տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչությունների պետերը:

Երևանի քաղաքապետ Տ. Մարգարյանը ներկայացրեց Երևանի ավագանու 2018 թվականի փետրվարի 13-ի նիստի օրակարգի նախագիծը.

1. Երևանի ավագանու 3-րդ նստաշրջանի 1-ին նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Երևանի ավագանու 3-րդ նստաշրջանի ժամանակավոր հաշվիչ հանձնաժողովի կազմը հաստատելու մասին:
3. «Երևանի «Մալաթիա» արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունն անվանափոխելու և կանոնադրության մեջ փոփոխություն կատարելու մասին:
4. «Երևանի հ.70 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունն անվանափոխելու և կանոնադրության մեջ փոփոխություններ կատարելու մասին:
5. «Երևանի հ.91 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունն անվանափոխելու և կանոնադրության մեջ փոփոխություններ կատարելու մասին:
6. Արամ Մանուկյանի հուշարձանի տեղադրմանը համաձայնություն տալու մասին:
7. Երևանի քաղաքապետի 2018 թվականի հունվարի 23-ի N172-Ա որոշումը հաստատելու մասին:
8. Երևան քաղաքի Մոսկովյան փողոցի հիմնանորոգման ծրագիրը հաստատելու մասին:
9. Երևանի քաղաքապետարանի և Եվրոպական միության միջև դրամաշնորհային պայմանագիրը հաստատելու մասին:
10. Երևան քաղաքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 26-ի N90-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
11. Երևան քաղաքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 26-ի N93-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
12. Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին:
13. Երևանի Փ.Բուզանդի փողոցի հ.1/3 հասցեում գտնվող շենքից անհատույց օգտագործման իրավունքով տարածք տրամադրելու մասին:

14. Պայմանագրի գործողության ժամկետը երկարացնելու մասին:
15. Պայմանագրի գործողության ժամկետը երկարացնելու մասին:
16. Պայմանագրերի գործողության ժամկետները երկարացնելու մասին:
17. Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:
18. Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:
19. Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:
20. Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:
21. Երևան համայնքի սեփականության 2017 թվականի գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին:
22. Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին:
23. Ս. Կարապետյանին ծառայողական ավտոկայանատեղ կազմակերպելու իրավունք տալու մասին:
24. «Բուզանդ-17» համատիրությանը ծառայողական ավտոկայանատեղ կազմակերպելու իրավունք տալու մասին:

Օրակարգի նախագծի վերաբերյալ հարց ուղղեց.

1. Մարինա Խաչատրյան – Երևանի ավագանու «Երկիր Ծիրանի» խմբակցության անդամ

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց Երևանի քաղաքապետ Տ. Մարգարյանը:

1. **ԼՍԵՑԻՆ** - Երևանի ավագանու 3-րդ նստաշրջանի 1-ին նիստի օրակարգը հաստատելու մասին:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 62անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 59, դեմ՝ 3, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

2. **ԼՍԵՑԻՆ** -Երևանի ավագանու 3-րդ նստաշրջանի ժամանակավոր հաշվիչ հանձնաժողովի կազմը հաստատելու մասին:

Երևանի քաղաքապետ Տ. Մարգարյանը հայտնեց, որ Երևանի ավագանու 3-րդ նստաշրջանի ժամանակավոր հաշվիչ հանձնաժողովը ձևավորելու նպատակով խմբակցությունները ներկայացրել են առաջարկություններ՝ հաշվիչ հանձնաժողովի կազմում ավագանու հետևյալ անդամների թեկնածություններն առաջադրելու համար.

- «Հանրապետական կուսակցություն» խմբակցություն՝ Սուրեն Ներսիսյան,
- «ԵԼՔ» խմբակցություն՝ Անի Խաչատրյան,
- «Երկիր Ծիրանի» խմբակցություն՝ Մարինա Խաչատրյան

ՈՐՈՇՎԵՑ - Հաստատել Երևանի ավագանու 3-րդ նստաշրջանի ժամանակավոր հաշվիչ հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելվածի:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ –ավագանու 62 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 59, դեմ՝ 3, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

3. **ԼՍԵՑԻՆ** - «Երևանի «Մալաթիա» արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունն անվանափոխելու և կանոնադրության մեջ փոփոխություն կատարելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետի խորհրդական Գագիկ Բաղդասարյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Ա. Հարությունյանը տեղեկացրեց, որ ««Երևանի «Մալաթիա» արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունն անվանափոխելու և կանոնադրության մեջ փոփոխություն կատարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

Քննարկվող նախագծի վերաբերյալ գլխադասային հանձնաժողովին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ - 1. «Երևանի «Մալաթիա» արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունն անվանափոխել ԽՍՀՄ և ՀՀ ժողովրդական արտիստ Կոնստանտին Օրբելյանի անվամբ՝ «Երևանի «Կոնստանտին Օրբելյանի անվան արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության:

2. Հաստատել «Երևանի «Մալաթիա» արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության փոփոխությունը՝ համաձայն հավելվածի:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 62 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 62, դեմ՝ 0, ձեռնպահ՝0

Որոշումն ընդունվել է միաձայն

4. **ԼՍԵՑԻՆ** - «Երևանի հ.70 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունն անվանափոխելու և կանոնադրության մեջ փոփոխություններ կատարելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետի խորհրդական Գագիկ Բաղդասարյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարց ուղղեց.

1. Մարինա Խաչատրյան-Երևանի ավագանու «Երկիր Ծիրանի» խմբակցության անդամ

Բարձրացված հարցի կապակցությամբ պարզաբանում ներկայացրեց Երևանի քաղաքապետ Տ. Մարգարյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Ա. Հարությունյանը տեղեկացրեց, որ ««Երևանի հ.70 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունն անվանափոխելու և կանոնադրության մեջ փոփոխություններ կատարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

Քննարկվող նախագծի վերաբերյալ գլխադասային հանձնաժողովին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթների համար գրանցվել են ավագանու 2 անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ արտահայտվեցին.

1. Արայիկ Հարությունյան-Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության անդամ
2. Մարինա Խաչատրյան-Երևանի ավագանու «Երկիր Ծիրանի» խմբակցության անդամ

ՈՐՈՇՎԵՑ - 1. «Երևանի հ.70 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունն անվանափոխել ««Լապտերիկ» մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության:

2. Հաստատել «Երևանի հ.70 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության փոփոխությունները՝ համաձայն հավելվածի:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 59 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 59, դեմ՝ 0, ձեռնպահ՝0

Որոշումն ընդունվել է միաձայն

ԸՆԴՄԻՋՈՒՄ.
Նիստը վերսկսվեց ժամը 12.40

Ելույթներով հանդես եկան Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության ղեկավար Դավիթ Խաժակյանը և Երևանի ավագանու «Հանրապետական կուսակցություն» խմբակցության անդամ Կամո Արեյանը:

5. **ԼՍԵՑԻՆ** - «Երևանի հ.91 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունն անվանափոխելու և կանոնադրության մեջ փոփոխություններ կատարելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետի խորհրդական Գագիկ Բաղդասարյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարց ուղղեց.

1. Սոննա Աղեկյան-Երևանի ավագանու «Երկիր Ծիրանի» խմբակցության անդամ

Բարձրացված հարցի կապակցությամբ պարզաբանում ներկայացրեց Երևանի քաղաքապետ Տ. Մարգարյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Ա. Հարությունյանը տեղեկացրեց, որ ««Երևանի հ.91 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունն անվանափոխելու և կանոնադրության մեջ փոփոխություններ կատարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

Քննարկվող նախագծի վերաբերյալ գլխադասային հանձնաժողովին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթների համար գրանցվել են ավագանու 2 անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ արտահայտվեցին.

1. Սոննա Աղեկյան-Երևանի ավագանու «Երկիր Ծիրանի» խմբակցության անդամ
2. Նատալյա Լափաուրի-Երևանի ավագանու «Հանրապետական կուսակցություն» խմբակցության անդամ

ՈՐՈՇՎԵՑ - 1. «Երևանի հ.91 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունն անվանափոխել ««Փոքրիկ երկիր» մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության:

2. «Երևանի հ.91 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության փոփոխությունները՝ համաձայն հավելվածի:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 58 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 58, դեմ՝ 0, ձեռնպահ՝0

Որոշումն ընդունվել է միաձայն

ԸՆԴՄԻՋՈՒՄ.
Նիստը վերսկսվեց ժամը 14.00

6. **ԼՍԵՑԻՆ** - Արամ Մանուկյանի հուշարձանի տեղադրմանը համաձայնություն տալու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետի խորհրդական Գագիկ Բաղդասարյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարց ուղղեց.

1. Արայիկ Հարությունյան-Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության անդամ

Բարձրացված հարցի կապակցությամբ պարզաբանում ներկայացրեց Երևանի քաղաքապետ Տ. Մարգարյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Ա.Հարությունյանը տեղեկացրեց, որ «Արամ Մանուկյանի հուշարձանի տեղադրմանը

համաձայնություն տալու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն։

Քննարկվող նախագծի վերաբերյալ գլխադասային հանձնաժողովին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել։

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթների համար գրանցվել են ավագանու 6 անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ արտահայտվեցին.

1. Արայիկ Հարությունյան-Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության անդամ
2. Մնացական Պարակշիեվ- Երևանի ավագանու անդամ
3. Մարինա Խաչատրյան- Երևանի ավագանու «Երկիր Ծիրանի» խմբակցության անդամ
4. Զարուհի Փոստանջյան - Երևանի ավագանու «Երկիր Ծիրանի» խմբակցության ղեկավար
5. Հասմիկ Սարգսյան – Երևանի ավագանու «Հանրապետական կուսակցություն» խմբակցության անդամ
6. Ալեն Սիմոնյան - Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության անդամ

Ելույթով հանդես եկավ Երևանի քաղաքապետի տեղակալ Արամ Սուքիասյանը:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Տալ համաձայնություն հայ նշանավոր պետական, քաղաքական և ռազմական գործիչ Արամ Մանուկյանի հիշատակը հավերժացնելու նպատակով նրա հուշարձանը Երևան քաղաքի Արամի և Նալբանդյան փողոցների խաչմերուկին հարող տարածքում տեղադրելու համար։

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 56 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 43, դեմ՝ 12, ձեռնպահ՝1

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

7. **ԼՍԵՑԻՆ** - Երևանի քաղաքապետի 2018 թվականի հունվարի 23-ի N172-Ա որոշումը հաստատելու մասին։

ԶԵԿՈՒՅՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Զավեն Առաքելյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 3 անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր ուղղեցին.

1. Սոննա Աղեկյան-Երևանի ավագանու «Երկիր Ծիրանի» խմբակցության անդամ
2. Անահիտ Բախշյան-Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության անդամ
3. Արայիկ Հարությունյան-Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի կապակցությամբ պարզաբանումներ ներկայացրեց քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Զ. Առաքելյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Ե. Ազարյանը տեղեկացրեց, որ «Երևանի քաղաքապետի 2018 թվականի հունվարի 23-ի N172-Ա որոշումը հաստատելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն։

Քննարկվող նախագծի վերաբերյալ գլխադասային հանձնաժողովին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել։

«Երևանի քաղաքապետի 2018 թվականի հունվարի 23-ի N172-Ա որոշումը հաստատելու մասին» ավագանու որոշման նախագծի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց Երևանի քաղաքապետ Տ. Մարգարյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթների համար գրանցվել են ավագանու 2 անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ արտահայտվեցին.

1. Սոննա Աղեկյան-Երևանի ավագանու «Երկիր Ծիրանի» խմբակցության անդամ
2. Հովիկ Մուսայելյան-Երևանի ավագանու «Հանրապետական կուսակցություն» խմբակցության անդամ

ՈՐՈՇՎԵՑ - 1. Հաստատել Երևանի քաղաքապետի 2018 թվականի հունվարի 23-ի «Երևան-Խելացի քաղաք» տեխնոլոգիական հիմնադրամ հիմնադրելու և հիմնադրամի կանոնադրությունը հաստատելու մասին» N 172-Ա որոշումը:

ԸՆԴՄԻՋՈՒՄ.

Նիստը վերսկսվեց ժամը 15.15

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 56 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 53, դեմ՝ 3, ձեռնպահ՝0

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

8. **ԼՍԵՑԻՆ** - Երևան քաղաքի Մոսկովյան փողոցի հիմնանորոգման ծրագիրը հաստատելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետի տեղակալ Վահե Նիկոյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 6 անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր ուղղեցին.

1. Զարուհի Բաթոյան-Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության անդամ
2. Անի Խաչատրյան- Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության անդամ
3. Աշոտ Աթյան- Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության անդամ
4. Տիգրան Տեր-Մարգարյան- Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության անդամ
5. Մարինա Խաչատրյան-Երևանի ավագանու «Երկիր Ծիրանի» խմբակցության անդամ
6. Ալեն Սիմոնյան- Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի կապակցությամբ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի քաղաքապետի տեղակալ Վ. Նիկոյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Ն. Նահապետյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի Մոսկովյան փողոցի հիմնանորոգման ծրագիրը հաստատելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

Քննարկվող նախագծի վերաբերյալ գլխադասային հանձնաժողովին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

«Երևան քաղաքի Մոսկովյան փողոցի հիմնանորոգման ծրագիրը հաստատելու մասին» ավագանու որոշման նախագծի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց Երևանի քաղաքապետ Տ. Մարգարյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթների համար գրանցվել են ավագանու 5 անդամ.

1. Անի Սամսոնյան- Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության անդամ
2. Սոննա Աղեկյան- Երևանի ավագանու «Երկիր Ծիրանի» խմբակցության անդամ
3. Մարինա Խաչատրյան-Երևանի ավագանու «Երկիր Ծիրանի» խմբակցության անդամ
4. Ռոզա Սիրունյան-Երևանի ավագանու «Հանրապետական կուսակցություն» խմբակցության անդամ
5. Աստղիկ Գևորգյան-Երևանի ավագանու «Հանրապետական կուսակցություն» խմբակցության անդամ

Ամփոփիչ ելույթով հանդես եկավ Երևանի քաղաքապետի տեղակալ Վ. Նիկոյանը:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Հաստատել Երևան քաղաքում գտնվող պետական սեփականություն համարվող անշարժ գույքի (բացառությամբ հողերի), իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում պետական մասնակցության, այդ թվում՝ անավարտ շինարարության օբյեկտների մասնավորեցումից ստացված միջոցների հաշվին Երևան քաղաքի Մոսկովյան փողոցի հիմնանորոգման ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Երևանի քաղաքապետին՝ սույն որոշման 1-ին կետով հաստատված ծրագիրը Հայաստանի Հանրապետության կառավարության հետ համաձայնեցնելուց հետո առաջարկություն ներկայացնել Երևան քաղաքի բյուջեում համապատասխան միջոցներ նախատեսելու վերաբերյալ:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 56 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 44, դեմ՝ 12, ձեռնպահ՝0

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

Արտահերթ ելույթով հանդես եկավ Երևանի ավագանու «Երկիր Ծիրանի» խմբակցության ղեկավար Զարուհի Փոստանջյանը:

9. **ԼՍԵՑԻՆ** - Երևանի քաղաքապետարանի և Եվրոպական միության միջև դրամաշնորհային պայմանագիրը հաստատելու մասին:

ԶԵԿՈՒՅՑԵՑ – Երևանի քաղաքապետի տեղակալ Վահե Նիկոյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Ե. Ազարյանը տեղեկացրեց, որ «Երևանի քաղաքապետարանի և Եվրոպական միության միջև դրամաշնորհային պայմանագիրը հաստատելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

Քննարկվող նախագծի վերաբերյալ գլխադասային հանձնաժողովին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Հաստատել Երևանի քաղաքապետարանի և Եվրոպական միության միջև 2017 թվականի դեկտեմբերի 27-ին ստորագրված դրամաշնորհային պայմանագիրը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 56 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 56, դեմ՝ 0, ձեռնպահ՝0

Որոշումն ընդունվել է միաձայն

10. **ԼՍԵՑԻՆ** - Երևան քաղաքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 26-ի N90-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

ԶԵԿՈՒՅՑԵՑ – Երևանի քաղաքապետի տեղակալ Վահե Նիկոյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Ն. Նահապետյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 26-ի N90-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

Քննարկվող նախագծի վերաբերյալ գլխադասային հանձնաժողովին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 26-ի «2018 թվականի տեղական վճարի գծով արտոնություններ սահմանելու, Երևան քաղաքի ավագանու 2014 թվականի հունիսի 24-ի N190-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և 2017 թվականի փետրվարի 14-ի N675-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N90-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 1-ին կետի 4-րդ ենթակետում՝ «մինչև 500 երեխայի հաշվարկով» բառերը փոխարինել՝ «մինչև 300 երեխայի հաշվարկով» բառերով,

2) 1-ին կետի 5-րդ ենթակետում՝ «մինչև 400 երեխայի հաշվարկով» բառերը փոխարինել՝ «մինչև 800 երեխայի հաշվարկով» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը և գործում է 2018 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա։

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 54 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 54, դեմ՝ 0, ձեռնպահ՝0

Որոշումն ընդունվել է միաձայն

11. **ԼՍԵՑԻՆ** - Երևան քաղաքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 26-ի N93-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին։

ԶԵԿՈՒՅՑ – Երևանի քաղաքապետի տեղակալ Վահե Նիկոյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարց ուղղեց.

1. Անի Սամսոնյան-Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության անդամ

Բարձրացված հարցի կապակցությամբ պարզաբանում ներկայացրեց Երևանի քաղաքապետի տեղակալ Վ. Նիկոյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Ն. Նահապետյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 26-ի N93-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն։

Քննարկվող նախագծի վերաբերյալ գլխադասային հանձնաժողովին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել։

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթների համար գրանցվել են ավագանու 3 անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ արտահայտվեցին.

1.Անահիտ Բախշյան-Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության անդամ

2. Անի Սամսոնյան-Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության անդամ

3. Դավիթ Խաժակյան-Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության ղեկավար

Ամփոփիչ ելույթով հանդես եկավ Երևանի քաղաքապետի տեղակալ Վ. Նիկոյանը:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 26-ի «Երևան քաղաքի 2018 թվականի բյուջեի մասին» N 93-Ն որոշմամբ հաստատված.

1) եկամուտների գումարն ավելացնել 1,882,694.5 հազար դրամով,

2) ծախսերի գումարն ավելացնել 5,249,512.6 հազար դրամով,

3) դեֆիցիտի (պակասուրդի) գումարը ավելացնել 3,366,818.1 հազար դրամով։

2. Երևան քաղաքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 26-ի «Երևան քաղաքի 2018 թվականի բյուջեի մասին» N 93-Ն որոշմամբ հաստատված NN 1-7 հավելվածներում կատարել փոփոխություններ՝ համաձայն սույն որոշման համապատասխանաբար NN 1-7 հավելվածների։

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 54 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 44, դեմ՝ 10, ձեռնպահ՝0

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

12. **ԼՍԵՑԻՆ** - Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին։

ԶԵԿՈՒՅՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Արսեն Ամյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Ն. Նահապետյանը տեղեկացրեց, որ «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն

անհատույց օտարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն։

Քննարկվող նախագծի վերաբերյալ գլխադասային հանձնաժողովին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել։

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել։

ՈՐՈՇՎԵՑ - 1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականությունը համարվող Եղբայրության փողոցի հ.19 շենքի հ.38՝ 30.05 քմ մակերեսով բնակարանը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 25032014-01-0102 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Օրբել, Ալեքսանդր, Անգելինա Սևոյաններին և Գրետա Վարդանյանին։

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 53 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 53, դեմ՝ 0, ձեռնպահ՝0

Որոշումն ընդունվել է միաձայն

13. **ԼՍԵՑԻՆ** - Երևանի Փ.Բուզանդի փողոցի հ.1/3 հասցեում գտնվող շենքից անհատույց օգտագործման իրավունքով տարածք տրամադրելու մասին։

ԶԵԿՈՒՅՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Արսեն Ամյանը։

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել։

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Ն. Նահապետյանը տեղեկացրեց, որ «Երևանի Փ. Բուզանդի փողոցի հ.1/3 հասցեում գտնվող շենքից անհատույց օգտագործման իրավունքով տարածք տրամադրելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն։

Քննարկվող նախագծի վերաբերյալ գլխադասային հանձնաժողովին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել։

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել։

ՈՐՈՇՎԵՑ - 1. Թույլատրել Երևանի քաղաքապետին՝ Երևան համայնքի սեփականություն հանդիսացող Փ. Բուզանդի փողոցի թիվ 1/3 հասցեում գտնվող վարչական շենքի 4-րդ հարկում գտնվող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.02082016-01-0176 վկայական) 74.1 քմ մակերեսով տարածքն անհատույց օգտագործման իրավունքով, երկու տարի ժամկետով, տրամադրել «Հայելի ակումբ» ժողովրդավարության աջակցության հասարակական կազմակերպությանը։

2. Ընդունել ի գիտություն, որ Փ. Բուզանդի փողոցի թիվ 1/3 հասցեում գտնվող վարչական շենքի 4-րդ հարկում գտնվող 74.1 քմ մակերեսով տարածքի անհատույց օգտագործման պայմանագիրը ենթակա է կնքման նույն հարկում «Հայելի ակումբ» ժողովրդավարության աջակցության հասարակական կազմակերպությանն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված 36.9 քմ մակերեսով տարածքը Երևան համայնքին ետ հանձնելու և հանձնման-ընդունման աշխատանքները իրականացնելուց հետո։

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 53 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 53, դեմ՝ 0, ձեռնպահ՝0

Որոշումն ընդունվել է միաձայն

14. **ԼՍԵՑԻՆ** - Պայմանագրի գործողության ժամկետը երկարացնելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Արսեն Ամյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Ե. Ազարյանը տեղեկացրեց, որ «Պայմանագրի գործողության ժամկետը երկարացնելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

Քննարկվող նախագծի վերաբերյալ գլխադասային հանձնաժողովին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Թույլատրել Երևանի քաղաքապետին՝ Երևան համայնքի սեփականություն հանդիսացող Փ.Բուզանդի փողոցի թիվ 1/3 հասցեում գտնվող շենքի 4-րդ հարկից «Հրապարակ օրաթերթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված 90.0քմ մակերեսով տարածքի անհատույց օգտագործման պայմանագրի գործողության ժամկետը երկարացնել երկու տարի ժամկետով:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 53 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 53, դեմ՝ 0, ձեռնպահ՝0

Որոշումն ընդունվել է միաձայն

15. **ԼՍԵՑԻՆ** - Պայմանագրի գործողության ժամկետը երկարացնելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Արսեն Ամյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Ե. Ազարյանը տեղեկացրեց, որ «Պայմանագրի գործողության ժամկետը երկարացնելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

Քննարկվող նախագծի վերաբերյալ գլխադասային հանձնաժողովին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող Փ. Բուզանդի փողոցի հ.1/3 հասցեում գտնվող վարչական շենքի 4-րդ հարկից «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ին տրամադրված 33.5քմ մակերեսով տարածքի անհատույց օգտագործման պայմանագրի գործողության ժամկետը երկարացնել մինչև 2020 թվականի փետրվարի 28-ը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 53 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 53, դեմ՝ 0, ձեռնպահ՝0

Որոշումն ընդունվել է միաձայն

16. **ԼՍԵՑԻՆ** - Պայմանագրերի գործողության ժամկետները երկարացնելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Արսեն Ամյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Ե. Ազարյանը տեղեկացրեց, որ «Պայմանագրերի գործողության ժամկետները երկարացնելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

Քննարկվող նախագծի վերաբերյալ գլխադասային հանձնաժողովին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Թույլատրել Երևանի քաղաքապետին՝ Երևան համայնքի սեփականություն հանդիսացող Փ.Բուզանդի փողոցի թիվ 1/3 հասցեում գտնվող շենքի 6-րդ հարկից «Անդին-Ա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված, համապատասխանաբար 52.4 քմ և 61.9 քմ մակերեսներով տարածքների անհատույց օգտագործման պայմանագրերի գործողության ժամկետները երկարացնել երկու տարի ժամկետով:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 53 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 53, դեմ՝ 0, ձեռնպահ՝0

Որոշումն ընդունվել է միաձայն

17. **ԼՍԵՑԻՆ** - Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Արսեն Ամյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարց ուղղեց.

1. Անի Սամսոնյան-Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության անդամ

Բարձրացված հարցի կապակցությամբ պարզաբանում ներկայացրեց քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Ա. Ամյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Հ. Թոքմաջյանը տեղեկացրեց, որ «Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

Քննարկվող նախագծի վերաբերյալ գլխադասային հանձնաժողովին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հունվարի 11-ի «Ներդրումային ծրագրին հավանություն տալու և «Պարկ Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանն առանց մրցույթի հողամաս տրամադրելու մասին» հ.5-Ա որոշմամբ Երևան քաղաքի Մոնթե Մելքոնյան փողոցին հարող տարածքում գտնվող հողերից՝ մանկական, երիտասարդական, ընտանեկան հանգստի և ժամանցի կենտրոն ստեղծելու նպատակով, «Պարկ Գրուպ» ՍՊԸ-ին վարձակալության իրավունքով տրամադրված 27.66հա մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը «անտառային» կատեգորիայի հողերից փոխադրել «հատուկ պահպանվող տարածքների» նշանակության հողերի կատեգորիա:

2. Երևանի քաղաքապետին՝ սույն որոշման 1-ին կետով հողամասի նպատակային նշանակության կատարված փոփոխության մասին 10-օրյա ժամկետում օրենսդրությամբ սահմանված կարգով տեղեկացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե և Հայաստանի Հանրապետության

կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե՝ կցելով սույն որոշման սահմանված կարգով հաստատված պատճենները։

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 53 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 44, դեմ՝ 0, ձեռնպահ՝9

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

18. **ԼՍԵՑԻՆ** - Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին։

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Արսեն Ամյանը։

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել։

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Հ. Թոքմաջյանը տեղեկացրեց, որ «Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն։

Քննարկվող նախագծի վերաբերյալ գլխադասային հանձնաժողովին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել։

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել։

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի Զորափի փողոցի հ.հ.70/1 և 70/3 հասցեներին կից գտնվող, Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող, 66.0 քմ մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը «բնակավայրերի» կատեգորիայի հողերից փոխադրել «էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների» հողերի կատեգորիա։

2. Երևանի քաղաքապետին՝ սույն որոշման 1-ին կետով հողամասի նպատակային նշանակության կատարված փոփոխության մասին 10-օրյա ժամկետում, օրենսդրությամբ սահմանված կարգով տեղեկացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե՝ կցելով սույն որոշման սահմանված կարգով հաստատված պատճենները։

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 53 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 53, դեմ՝ 0, ձեռնպահ՝0

Որոշումն ընդունվել է միաձայն

19. **ԼՍԵՑԻՆ** - Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին։

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Արսեն Ամյանը։

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել։

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Հ. Թոքմաջյանը տեղեկացրեց, որ «Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն։

Քննարկվող նախագծի վերաբերյալ գլխադասային հանձնաժողովին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել։

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել։

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի Դավիթ Անհաղթի փողոցի հ.17 հասցեում գտնվող, «Ադդրեսս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող 2200.16 քմ մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը՝ «արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության» հողամասերի կատեգորիայից փոխադրել «բնակավայրերի» նշանակության հողերի կատեգորիա։

2. Երևանի քաղաքապետին՝ սույն որոշման 1-ին կետով հողամասի նպատակային նշանակության կատարված փոփոխության մասին 10-օրյա ժամկետում օրենսդրությամբ սահմանված կարգով տեղեկացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե՝ կցելով սույն որոշման սահմանված կարգով հաստատված պատճենները։

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 53 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 53, դեմ՝ 0, ձեռնպահ՝0

Որոշումն ընդունվել է միաձայն

20. **ԼՍԵՑԻՆ**- Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին։

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Արսեն Ամյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Հ. Թոքմաջյանը տեղեկացրեց, որ «Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն։

Քննարկվող նախագծի վերաբերյալ գլխադասային հանձնաժողովին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել։

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթի համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ արտահայտվեց.

1. Անի Սամսոնյան-Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության անդամ

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի Ֆուչիկի փողոցի հ.29 հասցեում գտնվող 1263.0 քմ մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը «արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության» հողերի կատեգորիայից փոխադրել «բնակավայրերի» հողերի կատեգորիա։

2. Երևանի քաղաքապետին՝ սույն որոշման 1-ին կետով հողամասի նպատակային նշանակության կատարված փոփոխության մասին 10-օրյա ժամկետում, օրենսդրությամբ սահմանված կարգով, տեղեկացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե՝ կցելով սույն որոշման սահմանված կարգով հաստատված պատճենները։

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 53 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 53, դեմ՝ 0, ձեռնպահ՝0

Որոշումն ընդունվել է միաձայն

21. **ԼՍԵՑԻՆ** - Երևան համայնքի սեփականության 2017 թվականի գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին։

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Արսեն Ամյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարց ուղղեց.

1. Անահիտ Բախշյան-Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության անդամ

Բարձրացված հարցի կապակցությամբ պարզաբանում ներկայացրեց քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Ա. Ամյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Ն.Նահապետյանը տեղեկացրեց, որ «Երևան համայնքի սեփականության 2017 թվականի

գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն։

Քննարկվող նախագծի վերաբերյալ գլխադասային հանձնաժողովին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել։

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթի համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ արտահայտվեց.

1. Անահիտ Բախշյան-Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության անդամ

ՈՐՈՇՎԵՑ - 1. Հաստատել Երևան համայնքի սեփականության 2017 թվականի գույքագրման փաստաթղթերը՝ համաձայն հավելվածի։

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 53 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 44, դեմ՝ 0, ձեռնպահ՝9

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

22. **ԼՍԵՑԻՆ** - Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին։

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Արսեն Ամյանը։

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարց ուղղեց.

1. Անի Խաչատրյան-Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության անդամ

Բարձրացված հարցի կապակցությամբ պարզաբանում ներկայացրեց քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Ա. Ամյանը։

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Հ. Թոքմաջյանը տեղեկացրեց, որ «Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն։

Քննարկվող նախագծի վերաբերյալ գլխադասային հանձնաժողովին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել։

«Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին» ավագանու որոշման նախագծի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի քաղաքապետ Տ. Մարգարյանը։

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել։

ՈՐՈՇՎԵՑ – 1.Համաձայնություն տալ՝ Նորայր Հայրապետյանին սեփականության իրավունքով պատկանող Երևան, Ավան վարչական շրջանի, Թումանյան թաղամասի հ.3/8 հասցեում, տարածագնահատման 7-րդ գոտում գտնվող 379.9քմ մակերեսով հողամասը (անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման հ.2559141 վկայական) Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող՝ Թումանյան թաղամասի հ.3 հասցեին կից տարածքում, տարածագնահատման 7-րդ գոտում գտնվող 379.9քմ մակերեսով հողամասի հետ փոխանակելուն։

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 53 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 44, դեմ՝ 9, ձեռնպահ՝0

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

23. **ԼՍԵՑԻՆ** - Ս. Կարապետյանին ծառայողական ավտոկայանատեղ կազմակերպելու իրավունք տալու մասին։

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետ Հենրիկ Նավասարդյանը։

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել։

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Ե.Ազարյանը տեղեկացրեց, որ «Ս. Կարապետյանին ծառայողական ավտոկայանատեղ

կազմակերպելու իրավունք տալու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն։

Քննարկվող նախագծի վերաբերյալ գլխադասային հանձնաժողովին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել։

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթի համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ արտահայտվեց.

1. Արայիկ Հարությունյան-Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության անդամ

ՈՐՈՇՎԵՑ – 1. Թույլատրել քաղաքացի Սարգիս Կարապետյանին սույն որոշման հավելվածում նշված տարածքում և սահմանված պայմաններով կազմակերպել ծառայողական ավտոկայանատեղ։

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 53 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 44, դեմ՝ 9, ձեռնպահ՝0

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

24. **ԼՍԵՑԻՆ** - «Բուզանդ-17» համատիրությանը ծառայողական ավտոկայանատեղ կազմակերպելու իրավունք տալու մասին։

ԶԵԿՈՒՅՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետ Հենրիկ Նավասարդյանը։

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 2 անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր ուղղեցին.

1. Անահիտ Բախշյան-Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության անդամ
2. Թեհմինա Վարդանյան- Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետ Հ.Նավասարդյանը։

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Ե.Ազարյանը տեղեկացրեց, որ ««Բուզանդ-17» համատիրությանը ծառայողական ավտոկայանատեղ կազմակերպելու իրավունք տալու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն։

Քննարկվող նախագծի վերաբերյալ գլխադասային հանձնաժողովին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել։

««Բուզանդ-17» համատիրությանը ծառայողական ավտոկայանատեղ կազմակերպելու իրավունք տալու մասին» ավագանու որոշման նախագծի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի քաղաքապետ Տ. Մարգարյանը։

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել։

ՈՐՈՇՎԵՑ – Թույլատրել «Բուզանդ-17» համատիրությանը սույն որոշման հավելվածում նշված տարածքում և սահմանված պայմաններով կազմակերպել ծառայողական ավտոկայանա-տեղ։

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 53 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 44, դեմ՝ 9, ձեռնպահ՝0

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

Երևանի քաղաքապետ Տ. Մարգարյանի առաջարկությամբ որոշվեց Երևանի ավագանու հերթական նիստը գումարել 2018 թվականի մարտի 19-ին, ժամը 11.00-ին։

Երևանի քաղաքապետ Տ. Մարգարյանը տեղեկացրեց, որ Երևանի ավագանու «Ելք» խմբակցությունը ներկայացրել է Երևանի ենթակայության մանկապարտեզների գործունեության հետ կապված որոշ փաստեր պարզելու նպատակով քննող հանձնաժողով ստեղծելու նախաձեռնություն: Հանձնաժողովի նախագահ է առաջադրվել «Ելք» խմբակցությունից Արայիկ Հարությունյանը, «Հանրապետական կուսակցություն» խմբակցությունը հանձնաժողովի անդամ առաջադրել է Նատալյա Լափաուրիին, իսկ «Երկիր Ծիրանի» խմբակցությունը հանձնաժողովի անդամ չի առաջադրել:

Տ. Մարգարյանը հայտնեց, որ քննող հանձնաժողովը համարվում է ստեղծված օրենքի ուժով, այն գործելու է 6 ամիս ժամկետով, քննող հանձնաժողովի խնդիրներն ու լիազորությունները սահմանվում են համաձայն հավելվածի:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Կազմեց՝
Ն. Ղուկասյան

Հավելված
Երևան քաղաքի ավագանու
2018 **թվականի փետրվարի** 13-**ի նիստի**
N3/1 **արձանագրության**

Քննող հանձնաժողովի խնդիրներն ու լիազորությունները

Հանձնաժողովի խնդիրներն են՝ Երևանի ենթակայության նախակրթական ուսումնական հաստատություններում պարբերաբար նկատվող հնարավոր խախտումների վերհանումը, այդ թվում՝ ապօրինի կամ պարտադրված դրամահավաքների, երեխաների նկատմամբ բռնություն գործադրելու, խմբերի խտության, լրացուցիչ կրթական ծրագրերի համար հավաքվող գումարների շարժի, իրականացված գույքային և վերանորոգման ծախսերի, շենքերի ընդհանուր պայմանների վերաբերյալ ուսումնասիրությունները: Հանձնաժողովի խնդիրներից է նաև Երևանի քաղաքապետարանի կողմից տրամադրված դրամական միջոցների ծախսման արդյունավետության գնահատումը, ինչպես նաև «Օգնիր մանկապարտեզիդ» համացանցային կայքով հանգանակված գումարների ծախսման ուսումնասիրությունը:

Քննող հանձնաժողովի լիազորությունները ներառում են «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված ավագանու անդամի լիազորությունները, այդ թվում.

- ընդունել հայտարարության տեքստեր և աշխատակարգային որոշումներ
- ստուգայցեր համայնքապատկան ՆՈՒՀ-եր.
- ՆՈՒՀ-երին վերաբերող փաստաթղթերի ստացումը գրավոր հարցումների միջոցով.
- ՆՈՒՀ-երի կառավարմանը վերաբերող տեղեկատվության ստացումը գրավոր հարցումների միջոցով:

Քննող հանձնաժողովը կարող է պահանջել մանկապարտեզների տվյալները՝ հետևյալի վերաբերյալ, որոնք պետք է հասանելի լինեն հանձնաժողովի ձևավորման օրվանից.

- վերջին 3 տարիներին խմբերի խտության փոփոխությունը.
- վերջին 3 տարիներին մանկապարտեզներ ընդունվածների ցուցակները՝ նրանց ծնողների անուն, ազգանունները.
- առկա հերթագրման ցանկերը՝ մատյաններում կատարված գրառումներով.
- վերջին 3 տարվա բանկային հաշիվների քաղվածքները, այդ թվում՝ մանկապարտեզների հիմնական հաշիվների և «Օգնիր մանկապարտեզիդ» հաշիվների մանրամասն քաղվածքները՝ բոլոր մուտքերով և ելքերով, ինչպես նաև հաշվեհամարից գումար հանողների և մուտքագրողների անուն, ազգանունները: Եթե մանկապարտեզն ունեցել է հաշվեհամարներ, որոնք վերջին հինգ տարիներին

փակվել են, այդ թվում՝ «Օգնիր մանկապարտեզիդ», դրանց մանրամասն քաղվածքները նույնպես պարտադիր են,

- վերջին 3 տարիների հաստիքացուցակները և տարիֆիկացիոն ցուցակները,
- վերջին 3 տարիներին քաղաքապետարանի տարբեր ստորաբաժանումների (այդ թվում՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հանրակրթության վարչության նախադպրոցական բաժնի, վերահսկողության վարչության և այլն) կողմից մանկապարտեզներում կատարված բոլոր ուսումնասիրություններն ու դրանց եզրակացությունները՝ հայտնաբերված խախտումներով և դրանց բացակայությամբ.
- հերթագրման ցանկերն ուսումնասիրելու համար անհրաժեշտ տվյալները: